ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ

ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2023 թվականի 1-ին եռամսյակի կատարման մասին:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյան

2023թ. ապրիլի 1-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել է 89,4 %-ով, նախատեսված 869,003.7 հազ դրամ սեփական եկամուտներից ընդամենը հավաքագրվել է 777,199.1 հազ. դրամ: Սեփական եկամուտների թերակատարումը կազմել է – 91,804.5 հազ. դրամ:

Մարզի համայնքների 2023թ. բյուջեների 1-ին եռամսյակի սեփական եկամուտների կատարողականը ըստ հարկատեսակների հետևյալ պատկերն ունի.

/հազ.դրամ/

Եկամուտների անվանումը	2023թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
Անշարժ գույքի հարկ	150,935.2	99,526.5	- 51,408.7	65.9
Գույքահարկ փոխադրամիջոցներից	346,954.1	352,090.3	5,136.2	101.5
Պետական տուրք	14,751.5	19,938.8	5,187.3	135.2
Տեղական տուրք	39,094.6	59,828.5	20,733.9	153.0
Հողի և գույքի վարձակալություն, այդ թվում՝	**96,885.5**	**71,244.8**	**- 25,640.6**	**73.5**
ա/ հողի վարձավճար	80,774.1	56,738.4	- 24,035.7	70.2
բ/ գույքի վարձավճար	16,111.3	14,506.4	- 1,604.9	90.0

Այլ եկամուտներ	220,382.8	174,570.2	- 45,812.6	79.2
Ընդամենը սեփական եկամուտներ	869,003.7	777,199.1	- 91,804.5	89.4

2023 թվականի 1–ին եռամսյակի փաստացի հավաքագրվածի աճի %-ը 2022թ. համեմատությամբ կազմել է 24.9 % կամ ավել է հավաքագրվել 154,913.4 հազ. դրամ:

Ըստ համայնքների 2023 թվականի 1–ին եռամսյակի բյուջեների նախատեսված սեփական եկամուտների կատարման ցուցանիշներն են.

/հազ դրամ/

h/h	Համայնքների անվանումը	2023թ. 3 ամիսների սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
1.	Արթիկ	120,828.0	136,312.6	15,484.6	112.8
2.	Անի	38,024.2	38,290.2	266.0	100.7
3.	Ամասիա	21,777.0	20,212.0	-1,565.0	92.8
4.	Գյումրի	484,193.4	433196.5	-50,996.5	89.5
5.	Աշոցք	41,579.0	35,962.6	-5,616.9	86.5
6.	Ախուրյան	162,602.2	113,225.7	-49,376.5	69.6

Մարզի համայնքներից՝ 2023 թվականի 1-ին եռամսյակի սեփական եկամուտների հավաքագրման ամենացածր ցուցանիշը գրանցվել է Ախուրյան համայնքում՝ 69.6%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 39.0% կամ աճի տոկոսը կազմել է 30.6, իսկ բացարձակ թվերով արտահայտված արձանագրվել է գումարային աճ՝ 25,163.7 հազ. դրամ:

Մարզի թվով 2 համայնքներ չեն ապահովել 2023 թվականի 1–ին եռամսյակին արձանագրված սեփական եկամուտների կատարման մարզի միջին ցուցանիշը՝ 89.4%-ը:

ՀՀ պետական բյուջեով մարզի համայնքներին 2023 թվականի երեք ամիսներին նախատեսված 1,748,757.8 հազ. դրամ «Դոտացիան» ամբողջությամբ ֆինանսավորվել է:

Մարզի համայնքներին ՀՀ պետական բյուջեից 2023 թվականի չորս ամիսների ընթացքում «Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին» հոդվածով ՀՀ կառավարության թվով 3 որոշումներով հատկացվել է 1,519,890.2 հազ. դրամ, որից փաստացի համայնքներին ֆինանսավորվել է 1,111,116.4 հազ. դրամ:

ՀՀ կառավարության որոշմամբ՝ «Շենքերի և շինությունների վերանորոգման» հոդվածով «Արթիկի թիվ 3 և թիվ 4 մանկապարտեզների» ՀՈԱԿ–ների վերանորոգման նպատակով հատկացվել է 466,912.5 հազ. դրամ, որը կֆինանսավորվի 2023 թվականի 3–րդ եռամսյակում, իսկ «Գյումրու Վարդան Աճեմյանի անվան դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ–ի շենքի արտաքին պատուհանների փոխարինման նպատակով հատկացվել է 34,670.7 հազ. դրամ, որը կֆինանսավորվի առաջիկայում:

2.ՀՀ Շիրակի մարզում գարնան գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկի և առաջիկա ծրագրերի մասին:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ռոման Համայակյան

Այսօրվա դրությամբ մարզում կատարվել է շուրջ 12000 հա գարնանացան, որից՝ 9500 հա գարի, 35 հա ցորեն, 730 հա այլ հացահատիկ, 18 հա հատիկաընդեղեն, 500 հա կարտոֆիլ, 250 հա բանջարեղեն, 1000 հա կերային մշակաբույսեր և 32 հա տեխնիկական մշակաբույսեր:

2023 թվականի բերքի տակ կատարվել է 18203 հա աշնանացան ցորենի ցանք, որը նախորդ տարվանից ավելի է 5523 հա-ով: Աշնանացան ցորենի ցանքատարածության աճին նպաստել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցության ծրագիրը: Նշված ծրագրի շրջանակներում ցորենի մշակությամբ զբաղվող մարզի 6302 շահառուներին ս/թ ապրիլի 27-ի դրությամբ տրամադրվել է փոխհատուցում՝ շուրջ 1.145 մլրդ դրամ:

Համաձայն Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցության ծրագրի 16-րդ կետի՝ ՀՀ Շիրակի մարզպետի հանձնարարականով ստեղծվել է աշխատանքային խումբ ընտրանքային մոնիթորինգ իրականացնելու նպատակով: Աշխատանքային խմբի կողմից մինչև ս/թ մայիսի 1-ը մարզի համայնքների բոլոր բնակավայրերում կիրականացվի աշնանացան ցորենի

ցանքատարածությունների ընտրանքային մոնիթորինգ, որը ընդգրկելու է մարզի շահառուների թվի առնվազն 15 %-ը։

ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվում է նաև՝

1. «ՀՀ-ում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման» ծրագիր
2. «ՀՀ-ում արդյունաբերական խեցգետնաբուծության զարգացման 2024-2026 թվականների» ծրագիր
3. ««Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության» ծրագիր
4. «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության» ծրագիր
5. «Հայաստանի Հանրապետությունում 2019-2023 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման աջակցության» ծրագիր
6. «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիր
7. «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության» ծրագիր
8. «Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների» ծրագիր
9. «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության» ծրագիր
10. «Հայաստանի Հանրապետությունում անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական» ծրագիր
11. «Հողային բարեփոխումների փորձնական» ծրագիր
12. «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2025 թվականների» ծրագիր

ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մարզին անհատույց տրամադրված 324.6 լիտր Բրոմոցիդ-Ֆլյուիդ տեսակի թունանյութով առավել վարակված 4057.5 հա տարածության վրա իրականացվել է մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումներ։

«Կայուն ներառական աճ լեռնային Հայաստանում» (SIGMA) ծրագրի շրջանակներում ս/թ մարտ ամսվա ընթացքում մարզի Ախուրյան, Արթիկ, Աշոցք և Ամասիա համայնքներում

համայնքապետարանների պատասխանատու պաշտոնյաների, բնակավայրերի վարչական ղեկավարների, ընտրված արժեշղթաներում գործունեություն իրականացնող առաջադեմ ֆերմերային տնտեսությունների, վերամշակող ձեռնարկությունների, գյուղատնտեսական տարատեսակ ծառայություններ մատուցողների և ընտրված արժեշղթաներում էական մասնակցություն ունեցող այլ շահագրգիռ կողմերի հետ հանդիպումների կազմակերպման և ընդհանուր համակարգման նպատակով մեր կողմից ցուցաբերվել է աջակցություն։

Գյուղատնտեսական կենդանիների հաշվառման արդյունքները ամփոփ տեսքով բերվում է ստորև ներկայացվող աղյուսակում /2022-2023թթ./.

	2022թ.	**2023թ.**	**Աճ/նվազում (+/-)**
Խ.ե.կ. /հազ. գլուխ/	79181	70082	**-9099**
Որից՝ կովեր /հազ. գլուխ/	37566	32356	**-5210**
Խոզեր /հազ. գլուխ/	13240	13421	**+181**
Ոչխարներ և այծեր /հազ. գլուխ/	88405	73674	**-14731**
Թռչուն /հազ. թև/	386221	379023	**-7198**

Նախորդ տարվանից մեկնարկած խոշոր եղջերավոր կենդանիների համարակալում և հաշվառում ծրագրի շրջանակներում իրականացվել է շուրջ 61000 գլխի համարակալում։ ՀՀ էկոնոմիկայի նախարարության Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն ՊՈԱԿ-ը 2023 թվականի մարտ ամսից մարզում իրականացնում է Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագիրը։ Մարզում կայուն անասնահամաճարակային վիճակի պահպանման նպատակով կատարվում են ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումներ։

Մարզում կայուն անասնահամաճարակային իրավիճակ ապահովելու նպատակով առաջակվել է համայնքների ղեկավարներին աջակցել անասնաբուժական ծառայությանը՝

անասնահակահամաճարակային տարեկան միջոցառումների պետական ծրագրի իրականացման աշխատանքներին, ինչպես նաև հսկել համայնքի տարածքով սեզոնային արոտ տեղափոխվող կենդանիների տեղաշարժը նախօրոք համաձայնեցված երթուղիներով և համապատասխան անասնաբուժական ուղեկցող փաստաթղթով:

Հաշվի առնելով վերջին տարիներին Կառնուտի ջրամբարում ջրի կուտակման հետ առաջացած խնդիրները և ոռոգման ջրի սակավությունը՝ մեր կողմից տարվեց հետևողական աշխատանք, ինչի արդյունքում Կառնուտի ջրամբարում ջրի կուտակումը սկսվեց ս/թ մարտի 12-ից:

Ջրամբարների լցվածությունը ս/թ մայիսի 2-ի դրությամբ

Հ/Հ	Ջրամբարի անվանումը	Ծավալը /մլն մ³/	Լցվածությունը առ 02.05.2022թ. /մլն մ³/	Լցվածությունը առ 02.05.2023թ. /մլն մ³/	Աճ/նվազում +/- /մլն մ³/
1	Ախուրյան	525.0	285,4	252,43	-32,97
2	Արփի լիճ	105.0	45,2	56,9	+11,7
3	Կառնուտ	22.6	9,47	11,47	+2,0
4	Սառնաղբյուր	4.8	0,64	0,28	-0,36
5	Վարդաքար	5.0	1,3	0,9	-0,4
6	Թավշուտ	6.0	0,98	1,38	+0,4
7	Մանթաշ	8.2	2,93	2,31	-0,62
8	Ջաջուռ	0.28	0,22	0,22	0,0
Ընդամենը		**151.88**	**60,74**	**73,46**	**+12,72**

Լցվածության հանրագումարը հաշվարկված է առանց Ախուրյանի ջրամբարի:

«Շիրակ» ՋՕԸ-ի կողմից իրականացվել է ոռոգման սեզոնի նախապատրաստական հետևյալ աշխատանքները՝

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	կմ
1	Ոռոգման ցանցի նորոգում	3.3

2	**Ռոգման ցանցի մաքրում**	578.1
3	**ՀՏԿ-ների նորոգում**	74
4	**Պ/Կ-ների նորոգում**	14

2023 թվականի մարտի 1-ից հոկտեմբերի 10-ը «Շիրակ» ջրօգտագործողների ընկերության կողմից իրականացվելու է նաև «Վարդաքարի ջրամբարի վերականգնում և արդիականացում» ծրագիրը՝ շուրջ 46 մլն դրամ ընդհանուր արժողությամբ:

Նշված ծրագրի շրջանակներում իրականացվելու է ջրամբարի ենթակառուցվածքների վերանորոգման և արդիականացման շինարարական աշխատանքներ, ջրամբարի շահագործման ծախսերի կրճատման և այլընտրանքային, էկոլոգիապես մաքուր էներգասնուցման ապահովում, ջրամբարին պատկանող հարակից տարածքում 100.1 կՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցում:

3. **ՀՀ Շիրակի մարզի համայնքների կողմից 2023 թվականի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ամբողջական փաթեթների ներկայացման մասին:**

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Կարեն Բաղիշյան

ՀՀ կառավարության 2006 թվականի 1708-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն 2023 թվականին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել 31 տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի ամբողջական փաթեթ՝ 130 ենթածրագրերով:

Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է **10 մլրդ 54 մլն դրամ**, որից ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորման չափաբաժինը կազմում **5 մլրդ 325 մլն դրամ** (53%), համայնքի բյուջեի ֆոնդային մասը՝ **4 մլրդ 640 մլն դրամ** (46.1%) և այլ ներդրողներ **89 մլն դրամ** (0.9%):

Ըստ համայնքների (ծրագրեր են իրականացվելու 42 բնակավայրում)

- Գյումրի համայնք՝ 9 ծրագիր 6 մլրդ 092 մլն դրամ արժողությամբ
- Ախուրյան համայնք՝ 10 ծրագիր 2 մլրդ 127 մլն դրամ արժողությամբ (մասնակցությունը 52%):
- Արթիկ համայնք՝ 4 ծրագիր 871 մլն դրամ արժողությամբ (մասնակցությունը 42%):
- Անի համայնք՝ 1 ծրագիր 484 մլն դրամ արժողությամբ (մասնակցությունը 12%):
- Աշոցք համայնք՝ 4 ծրագիր 340 մլն դրամ արժողությամբ (մասնակցությունը 28%):

- Ամասիա համայնք՝ 3 ծրագիր 140 մլն դրամ արժողությամբ (մասնակցությունը 32%):

Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության են արժանացել 20 ծրագիր (88 ենթածրագիր), որի ընդհանուր արժեքը կազմում է **5 մլրդ 715 մլն դրամ**, իսկ 11 ծրագիր (42 ենթածրագիր) դեռևս քննարկման փուլում է:

Ծրագրի ոլորտը	**Ծրագրերի քանակ**	**Ծրագրի սկզբ. (հազ. դրամ)**	**Արդյունք**
Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում	2	124,735,485	4.7 կմ, 2528 շահառու
Ոռոգման համակարգի կառուցում/նորոգում	2	664,235,280	800 հա, 341 տնային տնտեսություն
Բնակավայրի փողոցների կառուցում/նորոգում, ասֆալտապատում	4	3,303,319,511	15.2 կմ
Փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում	1	12,388,939	69 լուսակիր 1.9 կմ երկարությամբ
Վերականգնվող էներգետիկա, այդ թվում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում	1	1,762,454,650	2.88 ՄՎտ
Բնակավայրերի գազաֆիկացում	6	785,644,552.0	39 կմ
Նախադպրոցական հաստատությունների կառուցում, վերակառուցում/նորոգում	3	1,106,515,862	856 երեխա
Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառում	3	467,279,732	7991 քմ 2604 շահառու
Մեքենասարքավորումների և գույքի ձեռքբերում	3	1,221,912,000	41 մեքենաս.
Հասարակական շենքերի (մշակույթի տուն, համայն-քային կենտրոններ և այլն) կառուցում/վերանորոգում	5	455,536,910	11 հատ, 3861 քմ
Այգիների, պուրակների կառուցում/բարեկարգում	1	149,992,879	4 հատ, 22201 քմ

Ընդամենը	31	10,054,015,800	

4.2023 թվականի ընթացքում ՀՀ Շիրակի մարզում նախատեսված կապիտալ շինարարության ծրագրերի մասին:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Խաչատուր Խնձրցյան

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում քաղաքաշինության բնագավառում պետական բյուջեի միջոցներով և այլ ֆինանսական աղբյուրներով իրականացվելու են շուրջ **22 միլիարդ 100 միլիոն** դրամ գումարի կապիտալ ներդրումներ:

1. Բնակարանաշինություն (3 բնակելի համալիրների կառուցում 457 բնակարանով) - շուրջ 3.0 միլիարդ դրամ

Այդ թվում՝

- «Հայաստան» համահայկական հիմնադրամի պատվիրատվությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Մուշ» թաղամասում 9 հարկանի 2 բնակելի շենքերով համալիրի կառուցում – **50 բնակարան՝ շուրջ 1 միլիարդ դրամ**,
- Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց 9/10 հասցեի հողամասում բնակելի համալիրի կառուցում- **311 բնակարան՝ շուրջ 1 միլիարդ դրամ**,
- Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի N 9/5 հասցեում գտնվող բնակելի համալիրի կառուցում -**96 բնակարան՝-շուրջ 1 միլիարդ դրամ.**

2. 16 Կրթական, մշակութային և մարզական օբյեկտների կառուցում և հիմնանորոգում (այդ թվում՝ 1 վարժարան, 6 դպրոց, 7 մանկապարտեզ, 1 մշակութային և 1 մարզական օբյեկտներ) - շուրջ 4 միլիարդ 500 միլիոն դրամ

Այդ թվում՝

14 կրթական օբյեկտներ

- ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Գյումրու «Ֆոտոն» վարժարան» ՊՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում- **43 միլիոն 730 հազար դրամ**,
- ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյանի Նիկոլ Աղբալյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցում- **213 միլիոն 930 հազար դրամ**,
- ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բերդաշեն բնակավայրի «Բերդաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի կառուցում - **314 միլիոն 960 հազար դրամ**,

- ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի «Արեգնադեմի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի կառուցում - **171 միլիոն 870 հազար դրամ**,
- ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Կապսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ ի շենքի կառուցում - **178 միլիոն 80 հազար դրամ**,
- ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի կառուցում- **200 միլիոն դրամ**,
- ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի «Ազատանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի կառուցում- **400 միլիոն դրամ**,
- ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցում- **344 միլիոն 690 հազար դրամ**,
- ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արևշատ բնակավայրի «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցում - **335 միլիոն 740 հազար դրամ**,
- ՀՀ կառավարության 2023 թվականի № 498-Ն որոշմամբ հատկացված միջոցներով կիրականացվեն ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի թիվ 3 մանկապարտեզ» և «Արթիկի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ների շենքերի վերանորոգման աշխատանքներ - **466 միլիոն 910 հազար դրամ**
- Շարունակվելու են 2021 թվականին սկսված ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Զանգակ և Արթիկ համայնքի Հոռոմ բնակավայրի մանկապարտեզների շենքերի կառուցման աշխատանքները: 2023 թվականին սկսվելու են նաև Արթիկ համայնքի Նոր Կյանք բնակավայրի մանկապարտեզի շենքի կառուցման աշխատանքները- **495 միլիոն 410 հազար դրամ.**

1 մշակութային օբյեկտ

- Ընթացքի մեջ են «Վարդան Աճեմյանի անվան դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի շենքի արտաքին պատուհանների փոխարինման աշխատանքները- **34 միլիոն 680 հազար դրամ**:

1 մարզական օբյեկտ

- Շարունակվում են ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Արթուր Ալեքսանյանի անվան հունա-հռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան դպրոց» ՀՈԱԿ-ի կառուցման աշխատանքները- **1 միլիարդ 300 միլիոն դրամ**:

3. Ճանապարհաշինություն - շուրջ 13 միլիարդ 500 միլիոն դրամ

Այդ թվում՝

- **65.95 կմ երկարությամբ միջպետական հանրապետական և մարզային նշանակության ճանապարհահատվածների հիմնանորոգում- շուրջ 10 միլիարդ դրամ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ այս պահին մարզում իրականացվում են 6 ճանապարհաշինական

ծրագրեր՝ 49.9 կմ երկարությամբ՝ շուրջ **5 միլիարդ դրամ գումարի** շրջանակներում: Եվս 3 ճանապարհաշինական ծրագրեր՝ 8.4 կմ երկարությամբ, կմեկնարկեն երկրորդ կիսամյակում-շուրջ-**1 միլիարդ 500 միլիոն դրամ**:

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» պատվիրատվությամբ մարզում իրականացվում են 3 ճանապարհաշինական ծրագրեր՝ 4.85 կմ երկարությամբ, շուրջ **1 միլիարդ 600 միլիոն դրամ** գումարով: Եվս 3 ծրագրեր՝ 2.8 կմ երկարությամբ, կմեկնարկեն երկրորդ կիսամյակում-շուրջ **1 միլիարդ 900 միլիոն** դրամ:

- **Շարունակվում է Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման վարկային ծրագիրը՝ Տրանշ 3՝ Լանջիկ Գյումրի, 23.0 կմ երկարությամբ: Կիրականացվեն շուրջ 3 միլիարդ 500 միլիոն դրամ գումարի շինարարական աշխատանքներ:**

4. **Նախագծային աշխատանքներ -100.0 միլիոն դրամ:**

Այդ թվում՝

- ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Շիրակի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում - **35 միլիոն 280 հազար դրամ**,
- ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի նախագծահետազոտական, գեոդեզիաքարտեզագրական աշխատանքներ – **3 միլիոն 810 հազար դրամ**,
- ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Գյումրու մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՊՈԱԿ-ի նախագծահետազոտական, գեոդեզիաքարտեզագրական աշխատանքներ- **23 միլիոն 890 հազար դրամ**,
- ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքում նոր բնակելի թաղամասի կառուցման աշխատանքերի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ - **29 միլիոն 470 հազար դրամ**,
- Շարունակվում են «Արթիկի բժշկական կենտրոնի» նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները - **6 միլիոն 600 հազար դրամ**:

5. **Մասնավոր ներդրողների կողմից կանխատեսվում է շուրջ 1 միլիարդ դրամի կապիտալ ներդրումներ**

6. **Այլ տեղեկատվություն**

- ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2404-Ն որոշման 8-րդ կետի և ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի № 792-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի համաձայն հատուկ կարգավորման տարածքներում համայնքների

ղեկավարների կողմից 2023 թվականի հունվարի 25-ից մինչև մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածում ներկայացվել են 71 էսքիզային նախագծեր և քաղաքաշինական առաջարկություններ:

Նշված գործընթացի շրջանակներում.

- համաձայնեցվել են - 25 նախագծեր և առաջարկություններ,
- վերադարձվել են համայնքներ լրամշակման – 15 նախագծեր և առաջարկություններ,
- վերադաս մարմինների հետ գտնվում են համաձայնեցման փուլում – 22 էսքիզային նախագծեր.
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, ՀՀ ԿԳՄՍ նախարարության և ՀՀ Շիրակի մարզպետի կողմից չեն համաձայնեցվել – 9 նախագծեր և առաջարկություններ:

➢ Իրականացվել են համայնքներից ստացված 63 շինարարության թույլտվությունների ուսումնասիրություններ, անհամապատասխանություններ հայտնաբերելու արդյունքում ձեռնարկվել են համապատասխան միջոցներ (2 շինարարության թույտվության գործողություններ կասեցվել են)։

➢ ՀՀ Շիրակի մարզում ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կողմից հայտնաբերվել և կասեցվել են 3 ինքնակամ շինարարության դեպքեր: